ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

11«»ապրիլի2023թվականիN:117-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի,19-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N:1550-Լորոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կանոնադրության» 19-րդ կետի 16-րդ ենթակետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրագործման համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալներին հանձնարարել համակարգել հետևյալ բնագավառները, գործառույթները և դրանք ապահովող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանին վերապահել համակարգելու՝

1)քաղաքաշինության, տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության միջոցով,

2) գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության միջոցով,

3) հողօգտագործման բնագավառը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության միջոցով,

4) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառը, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Աննա Մարտիկյանին վերապահել համակարգելու՝

1) մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի միջոցով,

2) սոցիալական պաշտպանության բնագավառը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի միջոցով,

3)տեղական ինքնակառավարման մարմինների հետ իրավական հսկողության աշխատանքների իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի միջոցով,

4)տնտեսության զարգացման բնագավառը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմիզարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի միջոցով,

5) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության հետ կապված աշխատանքների իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի միջոցով:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է